կադմիկը Ռւկրաճնայում, Բեյրութայում և Անգլիոփրայում: ՆԵՊԸ և նրա պատմական իմաստը: ՌՍՖՍՀ և միութենական խորհրդային հանրապետութիւնների միջադպշին զրուծյունը վերահանդնան չըջանի առաջին տարիներում: Անգլո-խորհրդային համաձայնութիւնը և զխլումատիւրական ու առեւտրական հարաբերութիւնների վերակումը: Անգլո-խորհրդային համաձայնութիւն միջադպշին նշանակութիւնը: Վերականգնման չըջանի դժվարութիւններն ու առաջին հաջորդութիւնները և անգլո-Ֆրանսիական իմպերիալիզմի փորձերը նոր մեթոդներով հասնել այն բանին, փոր խորհրդային հանրապետութիւնների սոցիալ-անտեսական սխառմը փոխի: — Ճնոմայի և Հապայի կոնֆերենցիաները և դրանց արդյունքները: Կապիտալիստական չըջապատի ճամբարի հակասութիւնները և խորհրդային հանրապետութիւնների աւրտաքին քաղաքականութիւնը: Ռապապարտի պաշմանադիրը և դրա միջադպշին նշանակութիւնը: Մի շարք յեվրոպական պետութիւնների հետ քաղաքական և անտեսական հարաբերութիւնների վերակումը: ԽՍՀՄ արեւելյան քաղաքականութիւնը — խորհրդային առեւտրական, խորհրդային-արարական, խորհրդային-ազմանական, բարեկամութիւնը և դրա հեղափոխականացնող նշանակութիւնը: Հեռավոր արեւելյան հանրապետութիւն ապատադրումը քնտրիկներին և սպիտակ-գլխադրականներին: Քաղաքացիական պատերազմի ճակատների վերջնական լիկիդպշին:

Ներքին գրութիւն. Ժողովրդական տնտեսութիւն վերականգնման չըջանի առաջին ետապը: Արդյունաբերութիւն վերականգնումը, դրա տեմպերը և ձեւը: Արդյունաբերութիւն կազմակերպութիւնը և կառավարումը: Խորհրդային բանկերը, սինդիկատները, տրեսաները և դրանց ֆինանսական, արդյունաբերական և առեւտրական քաղաքականութիւնը: Մասնավոր կապիտալն արդյունաբերութիւն մեջ, դրա տեսակարար կշիւրը և դրա վրա հրահելու սխառմը: Առեւտրական ցանցը, կոոպերացիայի գերը գրանում: Նոր բուրժուազիայի գեմ արաքարելու մեթոդները, տեմպերը և ձեւերը քաղաքում և դյուդում:

Սոցիալիստական արդյունաբերութիւն առաջնորդող գերը և դյուդանտեսութիւնը: Խորհրդային հանրապետութիւնների աղրաբային-դյուդադրական քաղաքականութիւնը և դյուդանտեսութիւն վերականգնման ընդհանուր ընթացքը: Խորհրդային դյուդի սոցիալիստական ստրուկտուրան. — հոդադադրութիւնը, արեւտեպական ձեւը (УБЛАД) և սոցիալական հարաբերութիւնները (դյուդադրութիւն շերտավորման ուղիները, տեմպերը և ձեւերը): Գյուդի արդիստարական և կիսաարդիստարական շերտերի առաջնորդող գերը և միջակի հետ դաշինք կիսելու ձեւերը: Գյուդական բուրժուազիան և նրա տեսակարար կշիւրը խորհրդային դյուդում: Գյուդանտեսութիւն հանրապետութիւն սեկտորը և դրա գերը դյուդում:

ՌՍՖՍՀ և Խորհրդային հանրապետութիւնների ազգային քաղաքականութիւնը և ԽՍՀՄ կազմվելը: ԽՍՀՄ հիմնական սրենքի հիմնական սկզբունքները:

XVII/1 ԽՍՀՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ

(9-րդ դաստիսութիւն):

Միջազգային դրութիւն: Հակասութիւնների սրումը կապիտալիստական պետութիւնների միջև և ԽՍՀՄ շինարարութիւնը խանգարելու Անգլիայի փորձը: Անգլիական ուլաիմատումը (այսպես կոչված «Բերդնի նստան»), դրա իմաստը և հետեանքները: Յեվրոպայի քաղաքական կրիգիսի խորացումը և հեղափոխական անցքերը Յեվրոպայում — Կերմանիայում, Բորլարիայում և Եսատնիայում: Գերմանական պրոլետարիատի պարտութիւնը 1923 թ. աշնանը և յեվրոպական կապիտալիզմի մասնակի կայունացումը (ստարիլիդպշին): Ամերիկան և Յեվրոպան և նրանց հարաբերութիւնները ԽՍՀՄ հետ: Հարաբերութիւնների վերականգնումը Իտալիայի, Ֆրանսիայի և յեվրոպական այլ պետութիւնների հետ: Անգլիական և Ֆրանսիական իմպերիալիզմի փորձերը հակախորհրդային ֆրոնտն ամբարնդելու. — Ազգերի Լիգայի դործունելութիւնը. Լոկարնոյի համաձայնութիւնը և դրա հետեմանքները: ԽՍՀՄ արեւելյան քաղաքականութիւնը, խորհրդային-չինական բարեկամութիւնը: Կապիտալիզմի մասնակի ստարիլիդպշին կրիգիսը: Չինական հեղափոխութիւնը, անգլիական հանքադորձների գործադուլը, Վիեննայի անցքերը և ԽՍՀՄ միջադպշին դրութիւնը: Անգլո-խորհրդային կապերի խզումը 1927 թ.

և անդր—Փրանսիական իմպերիալիզմի փորձը ԽՍՀՄ ֆինանսական շրջափակում և ինտերվենցիա կազմակերպելու: Յեկրոպական բանվորական շարժման վերելքի սկիզբը և անդր—Փրանսիական իմպերիալիզմի ու նրա գործակալության—Լեհաստանի, Ռումինիայի և ուրիշների հակախորհրդային պլանների խախտումը: Կապիտալիստական պետությունների բանվոր դատակարգելի վերաբերմունքը դեպի Հոկտեմբերյան Հեղափոխության տասնամյակը:

Ներքին դրություն: Վերականգնման շրջանի յերկրորդ ետապը և արդյունաբերության մեջ մինչսոցիալիստական մակարդակին հասնելը: Արդյունաբերական պրոլետարիատի փոքրական և քանակական աճումը վերականգնման շրջանի վերջում:

Գյուղատնտեսության զարգացման ընդհանուր ընթացքը վերականգնման շրջանի վերջում: Գյուղի սոցիալական ստրուկտուրան և գյուղական բուրժուազիայի (կուլակություն) սահմանափակման քաղաքականությունը: Սոցիալիստական վերականգնման պրոբլեմը: Սոցիալիստական վերականգնման առաջին ետապը և դատակարգաչին պայքարի սրումը ԽՍՀՄ: ԽՍՀՄ սոցիալիստական վերականգնման հնգամյա պլանը: Սոցիալիզմի հարձակումն սմբողջ Փրանսիայի: Կուլակություն, իրեն դատակարգելի, լիկվիդացիան գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման հիմքի վրա: Սոցիալիստական շինարարության հանրադրամարենին ու հեռանկարները կուսակցության XVI համագումարի նախորդակին:

ԱՆՆՐԱԺԵՇՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. М. Н. Покровский.—Очерки по истории русской культуры, том I.
2. » —Русская история с древнейших времен, тт. 1, 2, 3 и 4.
3. » —Русская история в самом сжатом очерке, ч. I и II, ч. III.
4. » —Очерки по истории революционного движения в России.
5. Н. Ваган и С. Томсинский.—Экономическое развитие России, тт. I и II.
6. «История ВКП(б)», под ред. Ем. Ярославского, тт. IV и V.
7. Մ. Պակրովսկի.—Ռուսաց պատմություն (համառոտ ուրվագիծ) Ա. և Բ. մաս, Պետհրատ, 1926 թ.
8. » —Ռուսաց պատմություն (համառոտ ուրվագիծ) Գ. մաս, Պետհրատ, 1926 թ.
9. » —Ռուսաստանի XIX և XX դ. դ. հեղափոխական շարժման պատմության ուրվագծերը, Պետհրատ, 1929 թ.
10. Կ. Ղազարյան.—Ռուսաստանի դատակարգաչին պայքարի պատմություն, 19 և 20 դար, Քրիստոմատիա, պրակ Ա., Բ. և Գ., Պետհրատ, 1927 թ.

ՖԵՌՊԱԼԻԶՄԻ ԲԱՅԲԱՅՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՅԱՐՁԱԿ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԵԼԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(1-ին դասախոսություն).

ՖԵՌՊԱԼԻԶՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԽII—XVI ԴԱՐՆԵՐՈՒՄ).

Ֆեոդալական հարաբերությունները Ռուսաստանում, ինչպես և Արևելամուսուլման, ծագելից մանր գյուղացիական արտադրության հիմքի վրա։ Այն ժամանակ ինչպես և այժմ, գյուղացիական բնույթի գլխավոր աղբյուրը գյուղատնտեսությունն էր դրադրում։ Ֆեոդալական Ռուսաստանի գյուղատնտեսությունը պրիմիտիվ, և քանակական ընդհանրություն էր կրում։ Կոտորովի (подсечный) կամ խամթային (передельный) սխեման էր իշխում։ Տափաստաններում տարածված խամթային թուղենյու, և անտառային ուսյուններում տարածված կոտորովի կամ այրովի (огневое) տնտեսությունն այն էր, վոր հողագործը խամ հողը ցել անելով կամ հողաչերտի անտառը վաճառելով, մի քանի տարի իրար յետևից մինչև հողի ուժասպառումը վարում ու ցանում էր այն, իսկ հետո թողնում էր հին հողամասը՝ նորին անցնելու համար։ Այս սխեմայի ժամանակ հողի նշանավոր մասը մշակման յենթակա չէր, բայց այդ տարածությունն մի փոքրիկ մասն էր միայն ցանվում։ Այսպիսի հողագործությունն մնացորդները վերջերս գտնվելից Ռուսաստանի հյուսիս-արևելքում և Սիբիրում։

Վարում էլին արորով, պարարտանյութ չէին կիրառում, անասնապահությունը քիչ էր զարգացած։ Գյուղատնտեսությունը իբրև ոժանդակ գրադմանը լայն տարածված էլին ձկնորսությունը, մեղվաբուծությունը, դադանորսությունը, վարսորդությունը։

Տնտեսություն վարելու այսպիսի սխեմայի ժամանակ կուտակված, մեծ չենելով աղբյուրն անհարմար էր։ Այս պատճառով բոլոր պատմական փաստաթղթերը խոսում են ուսն գյուղացիներին փոքրաթիվ ծխերից կազմված չնանոցների (поселение) մասին։ Այդ բոլոր «գյուղերը», «խամ հողերը» («почины») և այլն կազմված էլին մեկ, յերկու, ավելի սակավ՝ հինգ ծխից։

Գյուղացու ընտանիքը վոչ միայն պահպանում էր հումուսթի—

կաշու, վուշի, բրդի և այլն արտադրությունը, այլև իր տնտեսությունն ուժերով վերամշակում էր այն, վոտնաման էր կարում, կտավ դործում, թաղիքն վոտնամաններ պատրաստում, լծասարք, գյուղատնտեսական ինվենտար շինում և այլն։

Արդյունագործող արդյունաբերությունը դեռ միայն չնչին չափով էր բաժանվել գյուղատնտեսությունից, գյուղատնտեսությունն հետ չկապված արհեստավորների դասակարգի զատման պրոցեսը դեռ սաղմային չըջանում էր գտնվում։ Գյուղացիական տնտեսությունը հիմնականում նատուրալ տնտեսություն էր։ Մարքսը տվել է նատուրալ տնտեսության բոլորովին պարզորոշ սահմանումը, վոր վոչ մի ծուռ մեկնաբանություն տեղ չի թողնում։ Փրոփ նատուրալ տնտեսության ժամանակ... հողագործական պրոդուկտը չըջանառություն պրոցես չի մտնում, կամ այդ պրոցեսն է մտնում այդ պրոդուկտի շատ չնչին մասը միայն»։ Յեվ ապա՝ «Տնային, արհեստային և մանուֆակտուրային աշխատանքն իբրև ոժանդակ արտադրություն հողագործության համար, վոր քանակ էր կազմում, այն արտադրության յեղանակի պայմանն է, վորի վրա հանգչում էր այդ նատուրալ տնտեսությունն ինչպես հին, այնպես էլ միջնադարյան Յելլոպայում»։

Իհարկե, չենք կարող խոսել Ռուսաստանի Ֆեոդալական գյուղացիների միջավայրում փոխանակության և դրամական հարաբերությունների բացակայության մասին։ Ամենից առաջ աշխատանքի աշխարհագրական բաժանումը, վոր նախորդում է աշխատանքի հասարակական բաժանմանը, արդեն ազատ հրապարակ էր բաց անում այդպիսի փոխանակության և դրամական հարաբերությունների աճման համար։ Այդ, յերկաթ և ուրիշ անհրաժեշտ նյութեր ամեն տեղ չկային, և հարկավոր էր այդ ամենը դնել։ Մյուս կողմից՝ Հյուսիսը, վորտեղ սլավոնները թափանցում էլին հաճախ արյունոտ պայքար մղելով այնտեղ ապրող վոչ սլավոն ցեղերի դեմ, արդեն այն ժամանակ բերովի հացահատիկի կարիք էր զգում, վորովհետև հողային և կլիմայական պայմանները հրապարակություն չէին տալիս զարգացնել հողագործությունն իբրև տնտեսույթյան հիմնական ճյուղ։ Այնտեղ գյուղատնտեսությունը ձկնորսության, մեղվաբուծության, վորսորդության և այլն վերաբերմամբ ոժանդակ դեր էր խաղում։

Այնպիսի քաղաքներ, ինչպես Նովգորոդը և նրա ուսյունը, հնուց բերովի հացով էլին կերակրվում։ Իսկապես հյուսիս-արևմելյան Ռուսիայի քաղաքները, չնայած վոչ-հողագործ բնակչու—

թյան թույլ չերտին, այնուամենայնիվ գյուղացու հացով եյին կերակրվում: Գյուղացին պետք է իր տնտեսության արդյունքները վաճառեր, վոր վճարեր դրամական բահրան, թեև դա նատուրալ բահրանների ընդհանուր դումարում չնչին մաս էր կազմում: Գյուղացիների մեջ դրամական հարաբերությունների զարգացման մասին իմանում ենք այն բանից, վոր լայն կերպով զարգացած էր գյուղացիներին վորդ, «արծաթ» փոխ տալու սխտեմը՝ տնտեսություն կազմելու, տարերային աղետներից հետո իրենց դործերը շտկելու համար և այլն:

Հետևաբար հարկ չկա խոսելու լիակատար նատուրալ ինքնամփոփ, անփոխանակություն տնտեսության մասին: Հարկավոր է խոսել միայն գյուղացիական տնտեսության գերիշխող նատուրալ գիմագծի մասին, այն մասին, վոր առևտրա-դրամական հարաբերությունները դեռ գյուղացու տնտեսավարության առաջնորդող փղղունքը չեն չհանդիսանում: Գյուղացու տնտեսությունը նրա պահանջները բավարարմանը հարմարեցրած տնտեսությունն էր, այլ վոր թե վաճառքի համար հումուլթ արտադրելու տնտեսություն:

Ֆեոդալիզմի դարաշրջանի ուսական քաղաքները, Նովգորոդի և Պոկովի բացառությամբ, դեռ առևտրա-արդյունաբերական կյանքի կենտրոն չէին հանդիսանում, ինչ վոր իր հերթին ցույց է տալիս աշխատանքի դիֆերենցիացիայի առևտրա-դրամական հարաբերությունների զարգացման ցած մակարդակը: Մեծ մասամբ այդ քաղաքներն ուղեւային իշխանների մեծացած վորտի-նաներն էին—աթոռանիստ քաղաքները, վորոնցում դառնում էր ուղեւային իշխանների և բոյարների ու նրանց սպասարկող ատրուկ ու աղատ ծառաների պալատը:

Ռուսաստանում ֆեոդալիզմի դարաշրջանում (XIII—XV դարերում) չստեղծվեց Արևմտյան Յեվրոպայի համար այնպես տիպիկ քաղաքային կուլտուրա արհեստային տեխնիկայի փարթամ զարգացումով և համարային կազմակերպության մեջ միավորված աղատ արհեստավորների դասակարգով. քաղաքային ինքնավարությամբ, վոր շատ հաճախ անկախ էր ֆեոդալից, այդ անկախության համար ֆեոդալների դեմ քաղաքների մղած պայքարով, քաղաքների ներսում արհեստավորների և պատրիցիաների միջև մղվող պայքարով և այլն: Ռուսական քաղաքներում, Նովգորոդի և Պոկովի բացառությամբ, չնչին քանակությամբ աղատ արհեստավորներ կային վոր կարող լինեյին սպասարկել վոր միայն

քաղաքի ընակիչներին, այլև շրջակայքի գյուղատնտեսական բրնակչությանը: Համարային կազմակերպության վորոշ տարրերի մասին կարող ենք խոսել միայն XVII—XVIII դարերում: Ռուսական քաղաքները ֆեոդալներից կամ մեծ իշխանից աղատ, անկախ հասարակական կյանք յերբեք չեն ունեցել:

Իսկ ինչով բացատրել XIII—XV դարերի ուսական ֆեոդալիզմի տնտեսական բազայի պրիմիտիվությունը: Ամենից առաջ մեր աշխարհագրությունը գրավում է աշխարհագրական միջավայրը—վատ հողը (կավախառն ու ավաղախառն հողը), ճահիճների և անառտների առկայությունը, վոր խանգարում էյին ինտենսիվ գյուղատնտեսության արագ տարածմանը: Ռուսաստանը յեռադաշտին անցավ XVI դարում, այն ել վոր ամեն տեղ: Յերկրի ուշ բնակեցումը, վոր Մոսկվայի պետության համար յեւման պլացդարմ (ամրացված շրջան) դարձավ, գաղութացման (կոլոնիացիայի) տեական պրոցեսը, վորի առաջին ետապը միայն XVI դարում վերջացավ,—այս ամենը բնականաբար արդեւակում էր աշխատանքի հասարակական բաժանման պրոցեսը:

Բացի սրանից ուս ժողովրդական տնտեսությունը, ամեն մի այլ տնտեսության նման, ինչ-վոր բոլորովին մեկուսացած ձևով չէ զարգացել. նա ունեցել է իր «միջավայրը», միջադպիսին տնտեսության տվյալ դրությունը: Այդ միջավայրի աղեցնությամբ և բացատրվում մեր պրոցեսը և մեր լճացումը: Որինակ՝ Կիևի Ռուսիայի տնտեսությունը չի կարելի պատկերացնել, հաշվի չառնելով Բյուզանդիայի, արաբների, մասամբ ել Արևմտյան Յեվրոպայի աղեցնությունը: Նովգորոդի տնտեսությունը սերտ կապված էր Հանդայի առևտրի հետ: Արևմտյան Յեվրոպայի, դրևա-վորապես հյուսիս-արևմտյան Հոլանդիայի, Դանիայի և Շվեդիայի տնտեսական պահանջն ուժեղ դարկ տվեց ուսական առևտրական կապիտալի զարգացմանը XVII դարի վերջում: «Մյուս կուլմից՝ հյուսիս-արևմտյան Ռուսիայի սնտեսական, իսկ դրան ել ամեն մի այլ կուլտուրական անկում այսպես կոչված ուղեւային շրջանում (XIII—XV դարերում) շատ ավելի լիակատար տնտեսական մեկուսացումով և բացատրվում, քան որինակ, քաղաքական արշավանքով» (Պակովսկի):

Գյուղացիական հին տնտեսությունը ֆեոդալիզմի դարաշրջանից շատ առաջ վարվում էր կոլեկտիվով (ուսերեն՝ «закрыта», «не чинше», «дворниче» և այլն), այսինքն՝ մեծ ընտանիքով, վորի մեջ համատեղում էր աղականների մի քանի սերունդ,

վորտեղ արտադրութիւնը և սպառումը հաւաքական էին և գույքերն անբաժան: Այդպիսի ընտանիքները միավորվում էին մեծ կոլեկտիվներում—տոհմերում (верви) հասարակական կյանքի և պաշտպանութեան համար: Արյունակցական սկզբունքը հսկայական դեր էր խաղում այդպիսի կոլեկտիվներում:

Այդպիսի «մեծ» ընտանիքների դոյութիւնը բացատրվում է նախնադարյան հողագործութեան բնութիւնով: Նախնադարյան հողագործութիւնը—չափազանց բարդ դործ էր, վոր պահանջում էր շատ աշխատող ձեռքերի ջանքեր: Ինչքան էլ վոր մեզ քաղաքացիներին համար դժվար է թվում արդի վարը, բայց գյուղացու համար, վորը յերկաթե գութան և ցաքան ունի, ծանոթ է պարարտացման գործին և հնուց աշխատում է մշակված հողի վրա, այդ մանկական խաղ է այն բանի համեմատութեամբ, ինչ հողագործութիւնը նրա նախորդների համար էր: Յերկու-յերեք աշխատող ձեռք ունեցող փոքրիկ ընտանիքը բոլորովին ի վիճակի չէր այդ գործը գլուխ բերել: Այդ պատճառով սլավոնների, բոլոր սլավոնական ցեղերի մեջ, ամենուրեք հանդիպում ենք միևնույն հիմնական հասարակական ձևը—հյուսիսային Ռուսաստանում «Печиче», հարավ-արեւմտայնում—«Дворище» սերբերի մեջ—«Великая куча», վորոնց համար բնորոշ է այն, վոր տնտեսութեան մեջ մեծ թիւով բանվորական ձեռքեր միանում են մեկ «ընտանիքի գլխի» («Большак») կամ «домачем»-ի (հարավային սլավոնների մեջ) իշխանութեան տակ (Պակոուսկի):

Ֆեոդալիզմի դարաշրջանում գտնում ենք այդպիսի կոլեկտիվ ձևերի մնացորդները միայն ինչպես հյուսիսում, այնպես էլ Ուկրայնայում:

Հետագայում այդ կոլեկտիվ արյունակից մեծ ընտանիքների քայքայման ու փոքրիկ ընտանիքների ստեղծման պրոցեսը և ընդհանուր գույքի բաժանումն է կատարվում, կոլեկտիվ աշխատանքից և արդյունքների բաշխումից անհատականին անցնելը: Մեր օրերում Ուկրայնայում նախկին կարգերից միայն մանր բեկորներ են պահպանվել: Որինակ XIX դարի յերկրորդ կիսում Պոլտավայի վիճակագիրներին հաջողվեց գտնել լոկ չնչին քանակութեամբ այնպիսի ընտանեկան կազմակերպութիւններ, վորոնք ներկայացնում են ազատ ընտանիքի այն տիպը, վոր կազմված է մեկ ամբողջութեան մեջ միացած ազգականների մեծ կամ փոքր խմբակներից, վորոնք միասեղ տնտեսութիւն են վարում, ընդ-

հանուր հող ունեն և մասամբ հիշեցնում են սերբիական զադրուգաները:

XVI—XV դարերում հիմնականում արդեն իշխում էր հողի մշակումն անհատական մանր ընտանիքներով, վորի մասին իմանում ենք Նովգորոդի XV դարի վերջի պիսցովի գրքերից (писцовые книги): Այդ անհատական ընտանիքները միավորված էին մեծ իշխանների հողերի վրա գյուղավարների համայնքներում և ունեյին համայնական ինքնավարութիւն, պարհակների համայնական բաշխում, հանդակների (անտառի, լճերի, արոտների և այլն) ընդհանուր ոգտագործման սխեմա, բայց առանց հավասար բաժանման, վորը հանդիսանում է մեր գյուղացիական համայնքի հիմքը XVII—XIX դարերում: Այսպիսի գյուղավարային (волостной) համայնքը մեծ վերապահութեամբ կարելի չէ մեծ ընտանիքը միավորող հին համայնքների (верви) մնացորդ համարել:

Մեր ուսումնասիրութեան յենթակա ժամանակում այն հողը, վոր տիրում էին ցեղերը, տոհմերը, համայնքները և վորը մրշակում էին ազատ մեծ ընտանիքները, հափշտակված էր բոյարներին—Ֆեոդալների և նրանց դրուժինիկներին կողմից: Գյուղացիները կախման մեջ ընկան Ֆեոդալներից և իրենց տնտեսութեան հավելյալ արդյունքով պետք է հոգային նաև դրուժինայի*) ապրուստը:

Ամեն մի բոյարին այս կամ այն քանակութեամբ հողի և այս կամ այն քանակութեամբ գյուղացիների տեր էր: Նա չահագործում էր ինչպես հողը, այնպես էլ գյուղացիներին: Բոյարինի հողերը ցրված էին առանձին կտորներով.—այդ բոլոր գյուղերը, շենքերը և այլն գտնվում էին տարբեր տեղերում: Այդ գյուղերից մեկում, կամ այդ շենքերից մեկում գտնվում էր բոյարինի «տունը» («Двор»), վորտեղ ապրում էր նա իր դրուժինայի և սարուկ ծառաների (дворня из холопов) հետ:

Իսկ ինչպես էր կառարվում հողի և գյուղացիների տնտեսական շահագործումը:

Պատմաբանների ձեռքի տակ յեղած նյութը ցույց է տալիս, վոր բոյարինն ինքը հողի միայն մի փոքրիկ մասն էր շահագործում: Բոյարինի փոքրածաւալ վարելահողը գլխավորապես մրշակվում էր սարուկների (холопы) աշխատանքով, վորոնք բոյարինի սեփականութիւնն էին և գտնվում էին նրա տանը կամ

*) Ֆեոդալական Ռուսիայի իշխանների դորքը ապա նաև գորքի կարենը—գոյն մասը կազմող իշխանական ծառաները: Ծանոթ. թարգ.

իրենց ապրուստի համար ստացած ունեյին փոքրիկ հողաբաժիններ և ինվենտար (ХОЛОПЫ СТРАДНИКИ): «Իշխանի տնային տնտեսությունը և գյուղատնտեսությունը,—գրում է պրոֆ. Պրեսնյակովը,— գլխավորապես վարվում էր ընդոճիների (ЧЕЛЯДЬ) աշխատանքով, ստրուկների աշխատանքով», վորոնց վրա հսկում էին գանաղան պաշտոնյաներ և ծառայողներ:

Բոյարական տնտեսության թույլ դարգացումը բացատրվում էր գյուղատնտեսական արդյունքների վաճառքի շուկաների բացակայությամբ և այն բանով, վոր բոյարինը կարող էր իր պահանջները բավարարել գյուղացիներից վերցրած նատուրալ բաժարով, իսկ փարթամության առարկաները գնում էր եյի նույն գյուղացիներից հավաքվող փողային բահրայով: Այսպիսով ուսական Ֆեոդալիզմի (ինչպես և արեվմտայնվորոպականի) բնորոշ գծերից մեկն էր խոշոր հողատիրության միացումը մանր գյուղացիական հողագործության հետ: Հողատիրոջ ամբողջ տնտեսավարությունն այն էր, վոր նա գյուղացիների հետ պայմանավորվելով՝ նստում էր իր տանը և սպասում, թե յերբ գյուղացիները նրա տուն կբերեն այն ամենը, ինչ հասնում է պայմանագրով, կամ նա ինքն իր մերձավորներով չրջան էր գնում և այնտեղ ստանում իր հասանելի մի մասը:

Բահրային հարաբերությունների ամենատարածված ձևը կիսարբությունն էր (ПОЛОВНИЧЕСТВО): Այս սիստեմը XV դարում տիրում էր Պսկովում: Նովգորոդի վոտչինաներում հողի մշակումն այն պայմանով, վոր արդյունքի վորոշ մասը հողատիրոջը տրվի, բոլոր տեսակի կալվածներում հողից ոգտվելու համարյա միակ ձևն էր: Կիսարբությունը տարածված էր նույնպես և Տվերի իշխանության մեջ, իսկ մինչև XV—XVI դարերը, հավանորեն ամբողջ Ռուսաստանում, իսկ վորոշ տեղերում, ինչպես որինակ, Վոլոգդայի նահանգում մինչև այժմ ել պահպանում է այն (КОЛОВЕСКИЙ П.—Экономический бытъ земледельческого населения России в конце XVI в., ст.—33)

Դրա ելությունն այն էր, վոր գյուղացին բերքի վորոշ մասը պետք է հողատիրոջը տար—որինակ՝ Պսկովում տալիս էին բերքի մի քառորդը, Նովգորոդում— մեկ հինգերորդը, մեկ քառորդը կամ մեկ յերրորդը, խիստ սակավ՝ կեսը:

Բացի դանից գյուղացիները նատուրալ տուրք (այսպես կոչված «МЕЛКИЙ ДОХОД») էին տալիս իրենց տնտեսության բոլոր հատվածներից—և՛ վոչխարի մսից, և՛ մանածից, յե՛վ չուգունե

ապակից (այնտեղ, վորտեղ դրադվում էյին յերկաթ հալելով), և՛ խոփից և այլն: Այլև փող էյին վճարում կամ «МЕЛКИЙ ДОХОД»—բերքեմն փողի էյին վերածում: Բոյարինն իր ստացած բոլոր արգյունքներն ստրուկ—արհեստավորների ձեռքով վերամշակում էր, բայց շատ հաճախ այդ արդյունքներն արդեն պատրաստի ստանում էր գյուղացիներից:

Ռուսաստանում Ֆեոդալիզմի դարաշրջանում խոշոր հողատերերի և գյուղացիների միջև բահրայի կողքին այլ տեսակի հարաբերություններ ել գոյություն ունեյին—կոռային հարաբերություններ: Ֆեոդալի սեփական վարելահողի մշակման աշխատանքը և Ֆեոդալի տնտեսության այլ աշխատանքները կատարում էին վոչ միայն ստրուկները, վորոնք դեռ XVI դարից շատ առաջ քայլ առ քայլ հողաբաժիններ և ինվենտար ունեցող գյուղացիներ էյին դառնում, այլև իսկապես գյուղացիները: Այն աղքատիկ նյութը, վոր թույլ է տալիս մեզ դատել գյուղացիների պարհակների մասին Ֆեոդալի նկատմամբ, մատնանշում է գյուղատնտեսական կոռն իբրև գյուղացիների շահագործման իրական ձև: XV դարի փաստաթղթերում, այսպես կոչված շորհագրերում (ЖАЛОВАННЫЕ ГРАМОТЫ), և՛ խոշոր վոտչինիկները, և՛ վանքերը կալված ստացողի ոգտին հրաժարվելով այն պարհակներից, վոր առաջ գյուղացիները կատարում էյին նրանց համար, թվում են այդ պարհակները: Դրանցից է նաև կոռը:

Գյուղացիների մեջ կոռի դարգացումը ցույց է տալիս նաև այն վառար, վոր բավական լայն դարգացած էր ինվենտար, անասուն կամ դրամ փոխ տալն այն պայմանով, վոր տոկոս վճարելու փոխարեն գյուղացին աշխատի Ֆեոդալի տնտեսության մեջ (այսպես կոչված ИЗДЕЛЬНОЕ СЕРЕБРО): Այդպիսով արդեն Ֆեոդալիզմի դարաշրջանում նշվեց ուս գյուղացուն կոռային հարաբերությունների մեջ ներգրավելու պրոցեսը և այնտեղ, կոռում, նրա մոտեցումը ստրուկին:

Վանքային տնտեսությունները տնտեսապես ավելի առաջադիմական էյին.—դրանք արդեն այն ժամանակ մասնակիորեն աշխատում էին շուկայի համար, այս պատճառով այդ տնտեսություններում գյուղացու կոռն ավելի վաղ է հանդիպում, քան բոյարական վոտչինաներում:

Անհրաժեշտ է նշել մեկ մոմենտ—այդ բահրաների և կոռային պարհակների մեծության կայունությունն է: Այս գլխավորապես բացատրվում է տնտեսական կյանքի դանդաղ տեմպով և

քայարինի ու նրա դրութիւնայի պահանջների դանդաղ աճումով։ Շահագործման նորմաները, յերկար ժամանակի ընթացքում չփոխվելով, հնությամբ սրբագործված շահագործման «սովորական» նորմայի ելին փոխվում, ինչ վոր դյուղացիներին հնարավորութիւն էր տալիս դարգացնել իրենց անտեսութիւնը։

Իսկ ինչպէս կարելի յէ բնորոշել բոյարինի հողի վրա ապրող և ֆեոդալ-բոյարինին բահրա վճարող գյուղացու սոցիալական դրութիւնը։ Բուրժուական պատմաբաններն այդ սոցիալական դրութիւնը վորոշում էլին իբրեւ ազատ վարձակալի դրութիւնը։ «Գյուղացին ազատ հողագործ էր, վոր ապրում էր ուրիշի հողի վրա՝ հողատիրոջ հետ ունեցած պայմանագրի համաձայն» (Կլյուչեւսկի)։ «Ըստ եյության սկզբնապէս բահրան անձնական ազատ համաձայնութեան արդյունք էր բահրատուների և հողատերերի միջև»,—գրում է մի այլ հեղինակ (Լապպո-Դանիւլսկի)։ Այստեղ ակնհայտ ցանկութիւն կա անցյալին վորտանցել գյուղատնտեսութեան արդի բուրժուական հարաբերութիւնները, ֆեոդալական շրջանի գյուղացուն ազատ վարձակալ ներկայացնել։ Մինչև վերջերս բուրժուական պատմական գիտութիւնը ժխտում էր ֆեոդալական հարաբերութիւնների առկայութիւնը մեր «միջնադարյան» եպոխայում, այսինքն XIII—XV դարերում։ Բուրժուական պատմաբանների կարծիքով ուստաց պատմութիւնն այլ կերպ է զարգացել, քան արեւմտայնվորապահանք։

Իրոք XIII—XV դարերում ուստաց պատմութեան մեջ իշխում էլին նույն ֆեոդալական հարաբերութիւնները, ինչ վոր Արեւմուտքում։ Այդ ֆեոդալական հարաբերութիւններն իրենց սեփական առանձնահատուկ գծերն ունեյին, վոր արմատապէս տարբեր էլին կապիտալիստականներից։ Ֆեոդալական դարաշրջանի գյուղացին արդի ֆերմերի նման ազատ վարձակալ չէր, այլ անձնական կախում ուներ ֆեոդալից։

Գյուղացու անձնական կախման հարաբերութիւնները ֆեոդալից ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի ամենաբնորոշ գիծն են հանդիսանում։ «Բայց թողնենք Ռոբինզոնի պայծառ կղզին»,—գրում է Մարքսը,—և տեղափոխվենք յեւրոպական մոռայ միջնադարը։ Մեր անկախ մարդու փոխարեն այստեղ գտնում ենք մարդիկ, վորոնք բոլորն էլ կախման մեջ են—գյուղացիներ և կալվածատերեր, վառսալներ և սենյորներ, աշխարհականներ և տերտերներ։ Այդպէս անձնական կախումը բնորոշում է նյութական արտադրութեան հասարակական հարա-

բերութիւնները նույն չափով, ինչպէս վոր այդ հիմքի վրա քարձրացող այլ վորոքաները»։

Ֆեոդալական դարաշրջանի գյուղացին ֆեոդալի անձնական սեփականութիւնը չէր, և դրանով նա տարբերվում էր ստրուկից, բայց նա իր հասարակական ու անձնական կյանքի բոլոր կողմերով կախում ուներ ֆեոդալից։ Գյուղացին ֆեոդալի գյուղը մտնելով, վոչ միայն իբրեւ բահրա և կող ալլատեսակ պարհաներ էր կատարում, այլև յենթարկվում էր ֆեոդալի դատարանին ու վոտտիկանութեանը, վորովհետև ամեն մի քիչ-չափ խոշոր ֆեոդալ վոչ միայն իր վոտչինայի հողային սեփականատերն էր, այլև թագավորը—քաղաքական իշխանութիւնը տվյալ վոտչինայի սահմաններում։

Ֆեոդալը, բացի սովորական բահրայից, գյուղացու վրա ունեցած իր իշխանութեան շնորհիվ նրա վրա ամեն տեսակ տուրքեր էր դնում—հարսանիքի, առևտրի, վորսորդութեան, ներկայանալու, տույժի և այլն։ Որինակ՝ Պսկովի դատական թղթի (Судебная грамота) համաձայն ֆեոդալն իրավունք ուներ գյուղացու դուքի կեսը յուրացնել, յերբ նա վոտչինայից հեռանում էր, մասնակցել մեռած գյուղացու ժառանգութեան բաշխմանը։ Գյուղացին վոտչինայից հեռանալիս պէտք է տեղափոխվելու, ապրելու վարձ տար և այլն։

Ինչով բացատրել, վոր հասարակական հարաբերութիւնները ֆեոդալիզմի դարաշրջանում անձնական կախման հարաբերութիւնների ձև էլին ընդունում։ Խոշոր ֆեոդալների պետական իշխանութիւն ունենալը բացատրվում է այն պատճառով, վոր առևտրա-դրամական հարաբերութիւնների թույլ զարգացման դարաշրջանում կենտրոնացած պետութեան համար հիմք չկար։ Ամեն մի քիչ-չափ խոշոր վոտչինա ապրում էր իր փակ, ինքնաբաւ կյանքով, ուստի բնական է, վոր ամեն մի քիչ-չափ խոշոր ֆեոդալ իր վոտչինայում լրակատար տեր էր, վոչ միայն սեփականատիրոջ, այլև թագավորի իրավունքներ ունենալով։ Ֆեոդալական Ռուսաստանը վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական իմաստով հարկավոր էր դիտել իբրեւ այդպիսի ֆեոդալական բըլիշների միահամոտութիւն, վորոնք ապրում են իրենց տնտեսական, և քաղաքական փակ կյանքով։ Այդ ֆեոդալական բըլիշները միախորովում էլին ուղեւային իշխանի ղեկավարութեան տակ, վորի մաս նրա բոյար-ֆեոդալները պատերազմի ժամանակ իրենց

սպառազորներով պետք է ծառայութեան դային և վորոնց նա յեր-
բեմն խորհրդակցութեան եր հրավիրում :

Մյուս կողմից՝ անձնական կախման հարաբերութիւնը,
գյուղացու անձն իրեն յենթարկելը Ֆեոդալի համար անհրա-
ժեշտ եր այն պատճառով, վոր այլ կերպ, քան անձնական կա-
խումով, նա չեր կարող փաստապես ինքնուրույն գյուղացուց հա-
վելլալ արդշունք կամ աշխատանք քամել : Գյուղացին փաստապես
ինքննաւար ու հող ունենալով, թեկուզ իրավապես Ֆեոդալին
պատկանելով, ի հարկէ հակում չեր ունենա Ֆեոդալին տալ իր
հավելլալ աշխատանքը կամ արդշունքը, այս պատճառով, վոր-
պէտքի Ֆեոդալն իրեն յենթակա տերիտորիայի վրա ապրող գյու-
ղացուն կարողանար հարկադրել բահրային և կոռային պարհակ-
ներ կատարելու, պետք է կիրառեր բռնութիւն, այսինքն՝ ար-
տաւտնեսական հարկադրանքի մեթոդներ, և ահա հենց իրրե
այդպիսին հանդես եյին գալիս անձնական կախման հարաբերու-
թիւնները : «Պարզ է, —գրում է Մարքսը, —վոր բոլոր ձեւերում,
վորոնց ժամանակ անմիջական բանվորն իր սեփական գոյութեան
միջոցների արտադրութեան համար անհրաժեշտ արտադրութեան
միջոցների և աշխատանքի պայմանների «տեք» և մնում, սեփակա-
նութեան հարաբերութիւնն անհրաժեշտորեն հանդես կգա իբրե
տիրապետման և յենթարկման անմիջական հարաբերութիւն, հե-
տեւաբար անմիջական արտադրողը—աղատ չի լինի, այդ աղատ
չլինելու հանգամանքը կոռային աշխատանք յենթադրող ճորտո-
ւորութիւնից կարող է մեղմանալ՝ հասնելով սոսկ բահրային
պարտավորութեան» :

XIII—XV դարերում ուսական Ֆեոդալիզմի դարաշրջանում
ուսական գյուղացին ճորտ չեր այն պատճառով, վոր առետրա-
դրամական հարաբերութիւնների թույլ դարդացման շնորհիւ չա-
հագործման մակարդակն այնքան բարձր չեր, վոր հարկադրանքի
գոյան ձեւեր պահանջվեյին և ամենից առաջ այն բանի շնորհիւ,
վոր կոռն իբրեւ չահագործման ամենածանր ձեւ լուի չնչին չափով
տեղի ունէր, մինչդեռ «այնտեղ, վորտեղ կոռային աշխատանք
գոյութեան ունէր, սակաւ և պատահում, վոր ճորտական կացու-
թիւնից ծագեր այն : Ընդհակառակը, ճորտական կացութիւնն եր
ծագում կոռային աշխատանքից» (Մարքս) : Ֆեոդալիզմի դարա-
շրջանում մեղ մոտ իշխում եյին անձնական կախման մեղմ ձեւեր,
վոր կապված եյին սոսկ բահրային պարտավորութեան հետ :

Վոտչինայի բնակչութիւնը միատար կախյալ մասսա չեր :

Յերկու բեւեռի—ստրկութեան (ХОЛОДОТВО) և սոսկական կախ-
վածութեան, ինչպես, որինակ, բահրային պարտավորութեան
միջև կան անցման խմբակներ, գլխավորապես պարտքերի մեջ
թաղված գյուղացիներ : Պարտքերում թաղված լինելը լայն դար-
գացած եր Ֆեոդալական դարաշրջանի գյուղացիների մեջ : Պարտ-
քի մեջ թաղված գյուղացիները «սերբերենիկ»^{*} եյին կոչվում :
Կար «վաշխի արծաթ», յերբ վորոչ պայմաններով տոկոս եյին
վճարում, և «դործավճար արծաթ», յերբ տոկոսների փոխարեն
հարկավոր է աշխատել բոյարի վարելահողում : Վերջին դեպքում
պարտքի մեջ թաղված գյուղացիները չահագործման տեսակետից
ստրկներին եյին մոտենում : Բացի դրանից կար ծառայադրման
փոխառութիւն, այսինքն՝ գյուղացին ծառայադրման պայմա-
նով փոխառութիւն վերցնելով, ծառայում եր վոտչինիկի տանը
և այդպիսով նույնպես մոտենում եր ստրկի վիճակին : Մինչեւ
XVI դարը ծառայադրումով ստրկութիւնը սովորաբար լիկվի-
դացիայի յեր յենթարկվում պարտքի վճարումով, բայց գյու-
ղացու պարտքի մեջ թաղված լինելը դժվարացնում եր, վոր նա
ուրիշ վոտչինիկի մոտ փոխադրվելու իրավունքից ուզովի, վո-
րովհետեւ հարկավոր եր նախապես պարտքը վճարել : Այսպիսով
Ֆեոդալների կալվածներում հին գյուղացիները—«հին բնակիչնե-
րի» կադր եր ստեղծվում :

Խոշոր Ֆեոդալները և վանքերն իրենց հողը և գյուղացիների
մի մասին չահագործման եյին տալիս դրուժինիկներին—«աղատ
ծառայողներին», վորի համար վերջիններս պարտավոր եյին
Ֆեոդալի տանը ծառայել և նրա հետ պատերազմ գնալ :

Խոշոր Ֆեոդալների և ուղեւային իշխանների ու վանքերի
այս դրուժինիկները, «աղատ ծառաները» հենց հանդիսանում
են նախորդներն այն ազնվական—կալվածատերերի, վորոնք XVI
դարում ի վան Ահեղի ղեկավարութեամբ պետք է հանդես գան ի-
րենց սյուլերեններին, խոշոր հողատերերին դեմ, իսկ XVII—XVIII
դարերում պետք է հանդիսանան ուսական հասարակութեան իշխող
դասակարգը :

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՎԵԼԸ

Ֆեոդալական մասնատման և ուղեւների ու իշխանու-
թիւնների բաժանված լինելու տնտեսական հիմքը նստուրալ տըն-

^{*} «Северно» (արծաթ) բառից :

տեսութիւնը, ապրանքային պտույտի և գրամական տնտեսութեան թույլ զարգացումը, խոշոր տնտեսական կենտրոնների, քաղաքների բացակայութիւնն էլին, քաղաքներ, վորոնք կարող լինել իրենց յենթարկել առանձին մարդերը:

Բնական պայմանները նույնպէս նպաստում էլին այդ մասնատմանը—ուղեւորները, իշխանութիւնները մեծ մասամբ հիմնվում էլին զետեղի ավազաններում, վորոնք իրարից բաժանված էլին ճահճութաներով և անտառներով, այնպէս վոր լիովին բնական անջատում էր ստեղծվում:

XV դարում տեղի յե ունենում այդ իշխանութիւնները, Մոսկվայի իշխանութեան ուղեւորներ ի մի հավաքումը, միավորումը վերեւից—դիւնված ուժով: Այդ միավորման շարժիչ սկզբունքը Մոսկվայի իշխանի շահն էր, վորը գլխավորում էր Մոսկվայի ֆեոդալ-բոյարներին և առևտրական բուրժուազիային, վորոնք ցանկանում էլին իրենց իշխանութիւնը տարածել մեծ տերրիտորիայի և մեծ քանակութեամբ անմիջական արտադրող-գյուղացիների վրա՝ նրանց շահագործելու համար: Մոսկվայի ֆեոդալները և Մոսկվայի առևտրականները Մոսկվայի մեծ իշխանի ղեկավարութեամբ հաղթող դուրս յեկան հարևան իշխանութիւնների դեմ մղած յերկար պայքարից և նրանց յենթարկեցին իրենց:

Բայց ինքնուրույն իշխանութիւններ—ուղեւորների յենթարկումը Մոսկվային դեռ չվերացրեց տնտեսական անջատվածութեւնը և չվնջեցրեց բոյարների տիրապետութիւնն ուղեւորման: Ֆեոդալական անջատվածութեան տնտեսական հիմքը—նատուրալ տնտեսութիւնը—դեռ խախտված չէր, ուղեւորները շարունակում էլին ապրել իրենց ինքնուրույն տնտեսական կյանքով:

Մոսկվայի XV—XVI դարերի պետութիւնը ֆեոդալների մի ընդարձակ աստղիացիա յե Մոսկվայի մեծ իշխանի գլխավորութեամբ, և Մոսկվայի մեծ իշխանն իր պետութեան վերաբերմամբ հանդես էր գալիս իբրև ուղեւոր տեր: Նրա ամբողջ հոգսը գլխավորապէս յեկամութեան կանոնավոր ստացումն էր:

Մոսկվայի իշխանը, ուղեւորին իշխանութիւններին իրենց յենթարկելով, հարկադրեց ուղեւորին իշխաններին և նրանց բոյարներին իր մոտ ծառայութեան մտնել, նրանց թողնելով իրենց նախկին իշխանութիւններին և՛ շահագործումը և՛ կառավարումը: «Վելիկոուս ժողովրդի» քաղաքական միութիւնը միայն XVII դարում է իրականացվելու, յերբ ֆեոդալական հարաբերու-

թիւններն իրենց հին ձևով առևտրա-գրամական հարաբերութիւնների զարգացման աղիւսութեան տակ լիկվիդացիայի կենթարկվեն:

Իսկ ի՞նչ տվեց Մոսկվայի ֆեոդալական իշխանութեանն իր հարկանների վրա տարած հաղթանակը: Սմենից առաջ առևտրական կապիտալի զարգացում: Մոսկվան զանվում էր Յեկոպի առևտրական մեծ ճանապարհի վրա և ներքին առևտրի ճանապարհների խաչմերուկում: Այսպիսով այն ժամանակի, թեկուզ և վորք, առևտրական շարժումն անխուսափելիորեն Մոսկվայի վրայով է կատարվում: Մոսկվայի իշխանն այս նպատակովր դրութիւնից ոգտվում, վաճառականներից մաքս (МЫТЪ) էր վերցնում Մոսկվայի տերիտորիայով անցնելիս (այստեղից էլ ռոտացի է իր անունը Մոսկվայի մոտ գտնվող Միտիչի գյուղը): Մոսկվայում պահեստներ էլին շինվում, բնակութիւն էլին հատատում վաճառականները, այդպիսով համակենտրոնացնելով հարստութիւնները և հենց դրանով ստեղծելով Մոսկվայի տրնտեսական հզորութիւնը:

Ուղեւորին իշխաններն իրենց առևտրում կախում ունեյին Մոսկվայից: Նրանք յինված բաց պայքարում էլ չէլին կարող Մոսկվայի հետ հաշիվ նստել, վորովհետեւ Մոսկվան իր հարստութիւնները ոգտադործում էր և իր մոտ ծառայութեան հրապուրում բոյարներին, ուղեւորին իշխաններին իրենց դրոժինաների հետ, այդպիսով մեծացնելով իր ռադական հզորութիւնը:

Մոսկվայի իշխանութեան նվաճողական քաղաքականութեան գլուխն էլին կանգնած Մոսկվայի ֆեոդալները, վորոնք աչք էլին տնկել գյուղացու հողի և իրենց հարկանների հարստութեան վրա, տենչում էլին ուղեւորին իշխանների հողերի կառավարումն իրենց ձեռքը գցել (այն ժամանակ կառավարել կնրշանակեր «կերակրվել» կառավարած շրջանի միջոցներով, այդ պատճառով ռուսերեն «кормление» բառը «управление» բառին նույնանիշ էր:

Մոսկվայի հարստութիւնն ապահովում էր Մոսկվայի իշխանին, բոյարներին և վաճառականներին թաթարական խանի պաշտպանութիւնը: Այն ժամանակ թաթարական խանը Ռուսիայի փաստական տերն էր: Նա տուրք էր առնում, իշխաններին մեկ իշխանութիւնից մյուսն էր տեղափոխում և այլն: Խանն իր հովանավորութեան տակ առաւ Մոսկվայի իշխանին: Նրան էր հանձ-

նորարարած խանի անունից տուրք հավաքել մյուս բոլոր իշխաններից: Տվերի, Ռյազանի, Նիժնի Նովգորոդի հզոր իշխանների դեմ մղած պայքարում խանը պաշտպանեց Մոսկվայի իշխանին: Այսպիսով Մոսկվայի պետությունը ստեղծվեց այսպես ասած «անհավատների» ձեռքով:

Մոսկվայի իշխանին պաշտպանում էր նույնպես Փետրալական հասարակության անտեսական և իդեոլոգիական հզոր կազմակերպությունը—յեկեղեցին: Վանքերը և յեկեղեցիները խոշորադույն հողատերեր էին: Նրանց հողերի վրա այն ժամանակի ամենաուսուցիտնալ դոգմատիստությունն էր վարվում: Նրանք հանդես էին գալիս իրրև կենտրոնացած կազմակերպություն: Ուղղափառ յեկեղեցու հզորությունն ամրացման գործում դեր խաղաց թաթարական խանը: Ուղղափառ յեկեղեցին ուղղակի հարաբերություններ հաստատեց թաթարական խանի հետ, նրանից գրություններ էր ստանում, վորոնք ապահովում էին նրա ինքնուրույնությունը և արտոնությունները տուրքեր վճարելու գործում և այլն:

Յերբ Տվերի իշխանը, թաթարների դեմ ապստամբելով, սիրձեց իրեն յենթարկել յեկեղեցին, այն ժամանակ Վլադիմիրի միտրոպոլիտ Պյոտրը Մոսկվա փախավ Մոսկվայի իշխանի պաշտպանության տակ, հենց դրանով յեկեղեցական վարչության և աղղեցություն կենտրոնը Մոսկվա տեղափոխելով:

Փետրալական իշխանությունների միավորումը Մոսկվայի չուրջը վերջացավ XV դարի վերջին քառորդում գլխավոր առևտրական կենտրոնի—Նովգորոդի ջախջախումով և կցումով: Նովգորոդն իր աշխարհագրական դիրքի և ծովին մոտ լինելու չունհով, վորի հետ կապված էր ջրային լավ ճանապարհներով, այն ժամանակի համար հսկայական արտասահմանյան առևտուր էր անում: Նովգորոդի (և Պսկովի) առևտրականների ձեռքով էր անցնում ուղեւային իշխանությունների ամբողջ արտասահմանյան առևտուրը: Նովգորոդն իր դաղուլներում հսկայական հաղալները գտնվում էին Վոլգայի հյուսիսում մինչև Ուրալյան լեռները:

Մոսկվայի աճող առևտրական կապիտալը հանձինս Նովգորոդի ուժեղ մրցակցի հանդիպեց: Առաջնության պայքարն անխուսափելի յեր: Այս պայքարում Մոսկվայի առևտրական բուրժուազիային պաշտպանեցին նաև Մոսկվայի Փետրալները, վորոնք

աչք էյին տնկել և՛ Նովգորոդի հողերի և՛ Նովգորոդի դաղուլներին հարստության վրա:

Նովգորոդի ներքին սոցիալական հակասությունները նպաստեցին Մոսկվայի հաղթանակին: Նովգորոդում իշխում էին բույարները և վաճառականները: Բույարները հյուսիս-արեւելքում դաղուլներ ունեյին և խոշոր առևտուր էյին անում Արեւմուտքի հետ: Նրանք խիստ շահագրգռված էյին Մոսկվայի դեմ մղվող պայքարով, վորը նրանցից խլում էր այդ առևտրի արտոնությունը: Իսկ վաճառականությունը գլխավորապես առևտուր էր անում «վարի» հետ, այսինքն՝ Պոլովոսկիի հետ, և Մոսկվայի դեմ մղվող պատերազմը վնաս էր հասցնում այդ առևտրին: Այս պատճառով վաճառականությունն անտարբեր էր վերաբերվում դեպի այդ պատերազմը:

Մոսկվայի դեմ մղվող պատերազմով և Նովգորոդի պաշտպանությունամբ և՛ ավելի քիչ էյին շահագրգռված Նովգորոդի պետության դյուղացիները: Նովգորոդի ամբողջ կառավարող վերնախավը հանդես էր գալիս իրրև շահագործող, ընդ վորում այս շահագործումն արդեն խիստ ձևեր էր կրում, վորովհետև Նովգորոդի մարդում զարգացած էր փողային տնտեսությունը: Ողտվելով ներքին հակասություններից, նույնպես և այն կախումից, վոր Նովգորոդն ուներ Մոսկվայի իշխանությունից ստացվող հացահատիկից, Մոսկվան վճռական հարված հասցրեց Նովգորոդի բոյարությունը:

Հյուսիսային դաղուլները Մոսկվային անցան, իսկ Նովգորոդի բույարների հողերը համալսակեցին Մոսկվայի մեծ իշխանի գրուդինիկները և ծառաները: Նովգորոդի առևտրական նշանակությունն սկսեց արագ ընկնել, Մոսկվան դաքձավ առևտրական հարաբերությունների կենտրոն:

ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ XVI ՅԵՎ XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Վերևը հաստատեցինք, վոր Փետրալական Ռուսաստանի եկոնոմիկան մինչև XVI դարը տարբերվում էր եքստենսիվ կիսաթափառական հողագործության տիրապետումով և աշխատանքի հասարակական բաժանման թույլ զարգացումով: Արդյունադրածող արդյունաբերությունն որդանապես կապված էր դյուղացիական մանր տնտեսության հետ, անային արդյունաբերության ուժանդակ հանդիսանալով: «Մենք անային արդյունաբերություն

հնք անվանում, —գրում է Լենինը, —հում նյութերի վերամշակումը հենց նույն տնտեսության մեջ (գյուղացիական ընտանիքում), վորը արդյունահանում է այն: Տնային արհեստները կազմում են նատուրալ տնտեսության անհրաժեշտ պարագան... Այս ձևում արդյունաբերությունն իրեն արհեստ դեռ գոյություն չունի. այստեղ արհեստն անխզելիորեն կապված է հողագործության հետ իբրև մեկ ամբողջություն»: Աշխատանքի հասարակական բաժանման թույլ զարգացմանը համապատասխանում էր նաև առեւտրա-դրամական հարաբերությունները թույլ զարգացումը:

XV դարի վերջում և XVI դարի սկզբում եքստենսիվ կիսաթափառական հողագործությունը Մոսկվայի կենտրոնում և Նովոգորոդի շրջանում փոխվում է հողի մշակման ավելի ինտենսիվ յեռադաշտյան սխեմայի և սկսում է ինտենսիվ կերպով զարգանալ աշխատանքի հասարակական բաժանումը, իսկ դրա յետեից ել ապրանքային տնտեսությունը: Աշխատանքի հասարակական բաժանման զարգացումն իր սկզբնական ստադիայում այն ձևով է արտափում է հողագործաբարձից իբրև ինքնուրույն արհեստ, աճում է բացառապես կամ գլխավորապես արդյունաբերական գուծունեյությամբ զբաղվող արհեստավորների դասակարգը, հետևաբար և աճում է ապրանքային տնտեսությունը: «Վորովհետև ապրանքային տնտեսությանը նախորդող դարաշրջանում արդյունագործող արդյունաբերությունը միացած է արդյունահանող արդյունաբերության հետ, իսկ վերջինիս գլուխ է կանգնած հողագործությունը, ապա ապրանքային տնտեսության զարգացումը հողագործության վերջում է հանդես գալիս» (Լենին):

XVI դարի վերջի և XVII դարի պիսցովի գրքերի (ПИСЦОВЫЕ КНИГИ)* առատ նյութը մեզ հնարավորություն է տալիս խոսել գյուղացիական տնտեսության մեջ արհեստի աճման բավական ինտենսիվ պրոցեսի մասին: Նովոգորոդի շրջանի և Մոսկվայի կենտրոնի գյուղատնտեսական բնակչությունը ցուցակազրույց գրագիրները (ПИСЦЫ) չատ հաճախ գյուղերի բնակչության կազմում հիշատակում են «չհերկողներին», այսինքն՝ գյուղատնտեսությամբ չզբաղվողներին և մատնանշում, վոր այդ չհերկողներին մեջ կան

*) 15-րդ դարի յերկրորդ կիսից և 16-րդ դարից մնացած այս գրքերում, աւելը գնելու նպատակով, նկարագրում էյին գյուղական բնակչության տնտեսության բոլոր կողմերը: Մանոթ. թարգմ.

դարրիններ, կոչկակարներ, տակառագործներ, բրուաններ, վոչխարի մորթի պատրաստողներ և այլն: Սրանք գյուղական արհեստավորներն են, վորոնք բոլորովին կապված չեն կամ շատ քիչ են կապված գյուղատնտեսության հետ և անմիջականորեն աշխատում են գյուղացի-սպասողների համար: Գյուղերում կամ վանքերի մոտ գտնվող մանր շուկաների (ТОРЖКИ) ամբողջ ցանցը շրջակա գյուղերի գյուղացիների արհեստային և գյուղատնտեսական արդյունքների վաճառքի տեղն էր հանդիսանում:

Արհեստը վոչ միայն գյուղերում է զարգանում, այլև գնավում ու հաստատվում է քաղաքներում: XVI—XVII դարերի քաղաքները, ի տարբերություն ուստական վաղ ֆեոդալիզմի եպիսոպի քաղաքների, թեև դանդաղ, բայց անչեզոքեն սկսում են պարզ արտադրված առևտրա-արդյունաբերական բնույթ ստանալ: XVI դարի քաղաքները հետագայում Չեղովինը հաշվում է 220 քաղաք: Սարի քաղաքները հետագայում Չեղովինը հաշվում է 220 քաղաք: Սարի կայն դրանցից միայն քչերում բնակչության թիվը 1000 անց էր: XVII դարում քաղաքի բնակչության տոկոսը մոտավոր աղյայինքով հավասար էր 237%: Նույն Չեղովինի հաշիվներով արհեստավորները քաղաքների ամբողջ բնակչության մինչև 20—25% էլ են կազմում: XVII դարում XVI դարի համեմատությամբ քաղաքների բնակչությունը և արհեստավորների քանակը, իհարկե, շատացել էր, սակայն այդ շատացումը դանդաղ էր տեղի ունենում և շատ չէր: Քաղաքի արհեստի դեմքը բնութագրելու համար անհրաժեշտ է նշել, վոր քաղաքի արհեստավորների հիմնական խմբակը կազմում էյին ուսեստի մքերի արտադրության մեջ զբաղված արհեստավորները, ապա գալիս են մանածագործները և կաշեգործները, ընդ վորում մանածագործներից մատնանշված են միայն ամեն տեսակ դերձակները. մանկը և ջուշակությունը զարգանում էր վոչ թե քաղաքներում, այլ գյուղում. մեծագի մշակումը վերաբերում է արհեստավորների յերրորդ, ամենից քիչ զարգացած խմբակին: Արհեստավորներն ըստ յերեմիովինի աշխատում էյին վոչ միայն տեղական քաղաքային շուկայի, այլև՝ մեծադեղերի միջոցով՝ ել ավելի լայն շուկայի համար:

Կարևոր է նշել, վոր արհեստավորների կազմակերպության ցեխային (համաքաղային) սխեմայի լայն տարածում շատացավ ուստական քաղաքներում, վորովհետև մինչև XVI դարը ուստական քաղաքներում արհեստն ընդհանրապես չատ թույլ էր զարգացած: Իրա հետ միասին անհրաժեշտ է մատնանշել, վոր քաղաքային արհեստավորների (նույնպես և առևտրականների) մի զգալի մասը

կազմում էին կարվածատերերից և հոգեվորականությանից կա-
խում ունեցող մարդիկ: «Տուլայում, — կարդում ենք վերև հիշա-
տակված քաղաքների պատմարանի նույն գրքում, — արհեստագին
գործունեությունը գլխավորապես «ДВОРНИК»-ների ձեռքին էր,
այսինքն՝ այն մարդկանց, վորոնք կախում ունեին ազնվականնե-
րից և ղեկավարականներին»:

Ռուսաստանի XVI—XVII դարերի քաղաքների զարգացման
դանդաղ տեմպը, վորոնք լիակատար չափով հանդես չբերեցին
Ֆեոդալիզմի քայքայման դարաշրջանի քաղաքային կուլտուրայի
առանձնահատուկ գծերը, վոր կարելի չէ գիտել Արևմուտքում, —
բացատրվում է մի սոթոյ՝ շարք ուրյեկտիվ պատմական հանդա-
մանքներով, վորոնցից կարելի չէ մատնանշել հետևյալը. — արդեն
մեր կողմից ընդգծված աշխատանքի հստակական բաժանման և
առևտրա-դրամական հարաբերությունների թույլ զարգացումը
մինչև XVI դարը, վոր նպաստավոր չէր քաղաքների աճման հա-
մար: XVI դարից հետո հսկայական դեր խաղացին ուլրիչնիտայի
չրջանի քայքայման հետեմանքները, XVI դարի 70-ական թվական-
ների բնակչության հոսանքը հորավ և Պոլովիե և վերջապես
«խռովության ժամանակը» քայքայումը: Բայց վնասակա սրտ-
առնեք պետք է համարել XVI դարում ճորտատիրական իրա-
վացրեց կարվածներին և վճարականության բնակչությանն առ-
գնալու նրա պրոցեսը, վորոնք առանց այն ել փախած գյուղացինե-
րին իրենց պատերում աղատություն չէին տալիս, ինչպես վոր Ա-
յուրահատուկ դերը, վորը (այսինքն՝ առևտրական կապիտալի)
հենդել էր արտասահմանյան և ներքին առևտրի վրա և սկսել գյու-
ղի և քաղաքի արհեստավորներին մանր ապրանք արտադրողների
դարձնել, վորոնք մեծագործի միջոցով լայն շուկայի համար էլին
աշխատում և լիովին յենթակա էլին նրան:

XVII դարում Ռուսաստանում նշվում է այն պրոցեսը, վոր
արհեստը վերածում է կապիտալիստական արդյունաբերության
սկզբնական ստադիային և հասնում: Ռուսաստանի բնորոշ առանձ-
նահատկությունն այն է, վոր արդեն XVII դարում լայն տարած-
վում է կապիտալիստական արդյունաբերության այսպես կոչված
սայրանք արտադրող և դառնում՝ աշխատելով շուկայի համար:
Բայց արհեստավորն ինքը չի կարող իր աշխատանքի արդյունքը

հեռավոր շուկայում վաճառել. նա այդ ապրանքները վաճառում է
մեծագործի-առևտրականին: Շուկայի և արհեստավորի միջև խր-
կվելով, առևտրական կապիտալը հանձննա մեծագործի քայլ առ
քայլ մի սոթոյ՝ շարք միջանկյալ ողակների միջոցով արհեստավո-
րին իրեն և յենթարկում, փաստապես նրան ինքնուրույնությունից
զրկելով և վերջի վերջո տանն աշխատող վարձու բանվոր դարձնե-
լով: Այս ձևը Ռուսաստանում լայն տարածում ստացավ այն բանի
չնորհիվ, վոր արհեստավորները («սնայնագործները»), ճորտա-
կան կախման մեջ լինելով, լավ որչեկտ էլին հանդիսանում առև-
տրական կապիտալի շահագործման համար, վորովհետև կալվա-
ծատիրոջը դրամական բաճառ վճարելու համար՝ չնչին գնով վա-
ճառում էլին իրենց աշխատանքի արդյունքը: Մարքսը մատնանշում
է, վոր այդ ձևն արդեւակում է արդյունաբերական կապիտալի
զարգացումը, վորովհետև առևտրականը չի հոգում տեխնիկայի
զարգացման մասին, խոշոր ձեռնարկություն բանալու մասին, այլ
հիմն տեխնիկայի հիմքի վրա մանր արտադրող-արհեստավորի բո-
լոր հյուսթերն է ծծում:

Այս ձևի կողքին զարգանում է արհեստից խոշոր կապիտալիս-
տական արդյունաբերության անցնելու մի այլ ձև ևս — արհեստա-
վոր-ապրանք արտադրողը դանդաղորեն կապիտալ կուտակելու մի-
ջոցով կապիտալիստական արհեստանոցի, ապա և մանուֆակտու-
րայի տեր և դառնում: Բայց այս պրոցեսը չառ դանդաղ է տեղի
ունենում և միայն XVIII դարի վերջում կտեսնենք, թե ինչպես
ճորտ արհեստավորները և այլն մանուֆակտուրայի տեր են դառ-
նում: Առանձին գյուղացի-արհեստավորների կապիտալ կուտակե-
լու պրոցեսը խանդավում է ճորտատիրական իրավունքի շնոր-
հիվ — կալվածատերն արհեստավորի շահույթի մեծ մասը յուրաց-
նում է իբրեւ բաճառ: Հենց սրանով ճորտատիրական իրավունքը
ստեղծում էր նաև մեծագործի, առևտրական կապիտալի տնտե-
սական տիրապետման պայմանները:

Կապիտալիստական արդյունաբերության սնային սխառնը
(«սնայնագործական արդյունաբերությունը») և կապիտալիստա-
կան մանր արհեստանոցները գլխավորապես զարգանում էին Ան-
դրմոսկավյան մարզի հյուսիսային մասում:

Այդ ուսյոնում ամբողջ գյուղերն արդյունաբերական գործու-
նեկությունը են զբաղվում՝ լայն շուկայի համար աշխատելով:
Հայտնի չեն հալուզայի և Գորոխովեցի փայտե շինվածքները,
Աեմյոնովի փայտե աճանեղենները, Մոսկվայի կտավը (ПОЛОТНО)

Ֆարաբուլի, Կոստրոմայի, Վալդայի և Արխանգելսկի քաղաքներ (Холм), Կազանի, Նիժնի Նովգորոդի, Կոստրոմայի, Ֆարաբուլի մարզերը հռչակված էին յուֆուի (կաշվի մի տեսակը) մշակումով, վորը արտահանվում էր արտասահման. Նովգորոդի, Տվերի, Կոստրոմայի և այլ մարզերում զարգանում էր յերկաթի հանքանյութի, դարբինների և փականագործների արհեստը: XVI դարում Ռուսաստանն այցելված ոտարեկրկացիները նշում են, վոր, որինակ, Կոստրոմայի նահանգը հռչակված էր քաղաքի և կառավարողությունների, վոր արտահանվում էին նույնիսկ Հոլլանդիա: Կալուգայի փայտե շինվածքները, ինչպես ասում է ոտարեկրկացի Հերբերտսոնը, դեռ XVI դարի սկզբին փաճառվում էին ամբողջ Ռուսաստանում և արտասահմանում: Կային գյուղեր և արվարձաններ, վորտեղ արհեստավոր և առևտրական բնակչությունը չառ ալիքի վեր, քան հողագործ բնակչությունը: Այսպես, Կլեմենսեվսկի գյուղում կային 125 հողագործ և 137 վոչ հողագործ ծխեր: Գուսնիովում—հողագործ 30, իսկ վոչ հողագործ՝ 137: Արևմտյան շրջանի արվարձանում—8 և 156:

Մի կողմից՝ քաղաքների, արհեստի (քաղաքային և գյուղական), «անաշնադործական արդյունաբերություն» զարգացումը, մյուս կողմից՝ Ռուսաստանի առանձին ուսյանների տնտեսական առանձնահատկությունները և Արևմուտքի հետ հաստատված սերտ առևտրական կապն ուժեղ դարձնում էր առևտրա-գյուղական հարաբերությունները—առևտրական կապիտալի զարգացմանը: Չարգանում է հացահատիկի և մյուս գյուղատնտեսական հումքերի, ձկնի, աղի, արդյունաբերական շինվածքների և այլն առևտուրը: Վերեր նշած մանր շուկաները, վոր չընկալ գյուղերի արհեստի տեղերն էին, խոշոր շուկաների և տնտավաճառների յին վրիժում, վորտեղ հավաքվում են Ռուսաստանի առանձին ուսյանները կապում են առևտրի կենտրոնների և արտասահմանյան առևտրի նախահանգիստների հետ:

Առևտրի գերիշխող տիպը գյուղական շուկաների, տնտավաճառների և քաղաքների մանր առևտուրն էր: Քաղաքի և գյուղի մանր առևտրականները քաղաքներում գնում էին քաղաքային արհեստի արդյունքները և զավառներն էլին առնում ալն, ալնակից գյուղատնտեսական արդյունքներ բերելով:

